



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 15

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՏՈՐՀՐԴԻ՝
2021 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 23 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ
Օրակարգում՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էր Երևանի պետական համալսարանի ռեկտորի ժ/պ. պարոն Հ. Հովհաննիսյանը:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 23-ը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ: Այնուհետև առաջարկ եղավ գիտխորհրդի նիստը վարող նախագահ ընտրել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Մուրադյանին: Վերջինս տարեկան հաշվետվության համար ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանին:

Պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքում մասնավորապես նշեց:

Հայ բանասիրության ֆակուլտետում այս պահին առկա ուսուցմամբ բակալավրիատում սովորում են 236, իսկ մագիստրատուրայում՝ 53 ուսանողներ, հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ 46, մագիստրատուրայում՝ 13, ամբողջը միասին 348 հոգի: Ֆակուլտետում դասավանդում են 55 դասախոսներ, որոնցից 9-ը պրոֆեսորներ, 39-ը՝ դոցենտներ, 7-ը՝ ասիստենտներ: Ֆակուլտետն ունի առկա ուսուցմամբ 10, հեռակա ուսուցմամբ 8 ասպիրանտներ և 8 հայցորդներ: Ֆակուլտետի գիտխորհրդին կից գործում է մեթոդ խորհուրդը, որը պարբերաբար անդրադարձներ է կատարում կրթական ծրագրերի մշակումներին: Հաշվետու շրջանում տեղի է ունեցել ֆակուլտետային գիտխորհրդի 6 նիստ՝ դասերի ընդհատումների պատճառով որոշ ամիսների նիստեր չեն կայացել: Ֆակուլտետին կից գործում է 012 «Գրականագիտություն» աստիճանաշնորհող խորհուրդը: Հաշվետու ժամանակաշրջանում պաշտպանվել է երեք թեկնածուական, որից 2-ը

բանասիրության, 1-ը՝ ժուռնալիստիկայի մասնագիտությամբ: Թեև որոշ դասերի ընդհատումներին և ուսուցման եղանակների փոփոխություններին՝ ակտիվ գործունեություն է ծավալել Ուսանողական գիտական ընկերությունը, ինչը չենք կարող ասել Ուսանողական խորհրդի վերաբերյալ: Ֆակուլտետի երկու անդամներ ԵՊՀ գիտական խորհրդի և գիտահրատարակչական խորհրդի անդամներ են, մեկը՝ ԵՊՀ էթիկայի հանձնախմբի անդամ: Պետք է նշել, որ ֆակուլտետի մի շարք դասախոսներ ակտիվորեն մասնակցում են համահամալսարանական կյանքին, ընդգրկվում ուսումնական, կրթական ու գիտական աշխատանքների մեջ, ժամանակավոր հանձնախմբերում և այլն: Շատ ավելի մեծ է այն դասախոսների թիվը, ովքեր իրենց մասնակցությունն են ունենում ֆակուլտետային աշխատանքներում:

Ինչպես ասում են՝ բուհերում ամեն ինչ սկսվում է դիմորդների ընդունելությունից: Ցավոք, գնալով պակասում է բանասիրական կրթություն ստանալու ցանկություն ունեցողների քանակը: Նախկինում ֆակուլտետ էին ընդունվում շուրջ 150 ուսանողներ, որոնց 40%-ը՝ անվճար, այս տարի ընդունվել են 57 հոգի՝ անվճար են 8-ը: Պատճառները շատ են՝ աշխատանքի շուկայի բացակայություն, սոցիալական սուղ պայմաններ, անվճար ուսուցման տեղերի կտրուկ անկում, հասարակության մեջ բացասական վերաբերմունքի առկայությունն առ մանկավարժը, դասախոսը, մտավորական մարդը և այլն: Այսուհանդերձ, համավարակի տարածման և ուսման ձևերի փոփոխության աննախադեպ պայմաններում, ֆակուլտետի կոլեկտիվը արել է հնարավորը ուսանողների ուսուցումն ու կրթությունը բավարար կազմակերպելու, ուսման որակն ապահովելու, կոլեկտիվի աշխատանքային հարաբերությունները պահպանելու համար:

Ֆակուլտետում կատարված աշխատանքները ծավալուն են եղել: Ես կանդրադառնամ դրանց միայն մի մասին, և որքան հնարավոր է՝ հակիրճ:

Ասում ենք ծավալուն, քանի որ միայն ռեկտորատից, նախարարությունից և այլ հիմնարկներից ստացվող գրությունները, նախագծերը, որոշումները, առաջարկները, կանոնակարգերը.....այնքան շատ են, որ բավական է այլևս ոչինչ չանել ու միայն դրանցով զբաղվել: Ի դեպ, չենք կարող չասել, որ մեր կողմից գրված պատասխանները՝ դանայան տակառ լցվելուն է նմանվել, որը, ինչպես հայտնի է, անհատակ է:

Ֆակուլտետի աշխատանքների համառոտ հաշվետվությունը սկսենք 1-ին կուրսից, որի համար սեպտեմբերի 1-ին կազմակերպել ենք ընդունում, տեղեկացրել ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին, ծանոթացրել համալսարանական կրթության ձևին, գրադարանից մասնագետ հրավիրել ընթերցասարահից օգտվելու կարգին ծանոթացնելու համար: Համավարակի պատճառով այս տարի քաղաքային պանթեոն չգնացինք՝ խախտելով տասնամյակների ավանդույթը:

Ուսումնական գործընթացների գերագույն չափանիշը դասն է: Դասի կազմակերպմանը և անցկացմանը պետք է ստորադասվի ամեն բան: Այս առումով թեև դեկանատը, ամբիոնները ջանք ու եռանդ չեն ինայել, սակայն միշտ չէ, որ աշխատանքները բնական են ընթացել՝ ուսուցման ձևի հաճախակի փոփոխություն,

տեխնիկայի անսարքությունն և պակաս, ուսանողների հաճախելիության և մասնակցության նվազում, ինչու չէ՝ որոշ դասախոսների անպատասխանատվություն:

Դասերից զատ մեր դասախոսների մեծ մասը զբաղվել է գիտական գործունեությամբ: Ցուցադրվող գրքերը դրա վկայությունն են, որոնցից զատ մամուլի տարբեր օրգաններում տպագրվել են գիտական բազում հոդվածներ (այդ մասին կլիտսենք ամբիոնների աշխատանքներին վերաբերող հատվածում):

Ֆակուլտետում մեկ տարվա ընթացքում ստացվել են դոկտորական և թեկնածուական աստիճանների հայցման աշխատանքներ, որոնց վերաբերյալ տրվել են գրավոր կարծիքներ: Տրվել են նաև մենագրությունների, դասագրքերի, գիտական հոդվածներին վերաբերող գրախոսականներ և կարծիքներ: Ֆակուլտետի տարբեր ամբիոններ, որպես առաջատար կազմակերպություններ մասնակցել են այլ բուհերում և գիտական կենտրոններում պաշտպանության ընդունված աշխատանքների քննարկումներին: Ֆակուլտետի տարբեր ամբիոններ և առանձին գիտնականներ մասնակցել են գիտական կառույցներում և այլ բուհերում կազմակերպված գիտական նստաշրջաններին, հանդես եկել զեկուցումներով՝ Լեզվի ինստիտուտում, Գրականության ինստիտուտում, Մանկավարժական համալսարանում և այլն: (Ցուցադրված հրավիրատոմսերը վկայությունն են գիտական և մշակութային միջոցառումներին ֆակուլտետի դասախոսական կազմի մասնակցությանը): Մեր մի շարք դասախոսներ լեզվի և գրականության ինստիտուտների, տարբեր գիտական հիմնարկների ու կազմակերպությունների, գիտական և աստիճանաշնորհող խորհրդի անդամներն են: Ֆակուլտետը աշխատանքներ է ծավալել ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդիկաների կատարելագործման ուղղություններով, մշտապես կիրառական աշխատանքներ կատարել, տվել գրավոր կարծիքներ, թեև պատահել է, որ եկող հրահանգներն ու շրջաբերականները միշտ չէ, որ բացատրելի են եղել (այդպիսի օրինակ կարող է հանդիսանալ դասախոսությունները շաբաթվա կտրվածքով գրավոր ձևով ի-լրնինգ հարթակում դնելու պահանջը):

Հաշվետու շրջանում ֆակուլտետում տեղի են ունեցել միջազգային գիտաժողովներ: Ֆակուլտետում կազմակերպվել են միջազգային գիտական նստաշրջաններ, որոնք նվիրված են եղել Մուշեղ Իշխանի և Հակոբ Կարապենցի ստեղծագործությունների նորովի գնահատումներին: Կարդացված զեկուցումներից մեկը լույս է տեսել առանձին գրքով, մյուսը տպագրվում է:

Երկար տարիների ընդմիջումից հետո, անց է կացվել պրոֆեսորների և դոցենտների տեղակալման մրցույթ: Չենք կարող չնշել, որ տեղերի պակասի պատճառով կոլեկտիվում ստեղծվել է ավելորդ լարվածություն՝ 10-15 տարի դոցենտների պաշտոն զբաղեցրած մի շարք առաջատար դասախոսներ չեն անցել մրցույթով և այսօր ստիպված են աշխատել 0.5 դրույքով:

Մրցույթ է անցկացվել նաև հայ գրականության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար՝ ընտրվել է պրոֆ. Ալ. Մակարյանը, իսկ նախորդ վարիչ պրոֆ. Ս. Մուրադյանը ստացել է ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:

Ֆակուլտետում գործել է ատեստացիոն հանձնաժողովը: Դեկանատի աշխատակիցները և ուսումնաօժանդակ անձնակազմը անցել են տարեկան ատեստացիան:

Մի շարք աշխատակիցներ մասնակցել են վերապատրաստման դասընթացների «Մանլբրի» համակարգում իրենց հմտությունները խորացնելու համար: Ֆակուլտետում ամփոփվել և գիտխորհրդում քննարկվել են անվանական կրթաթոշակի ներկայացվողների թեկնածությունները: Եղած չորս անվանակարգերին այս տարի ավելացել է նաև «Խորեն Պալյանի» կրթաթոշակը:

ՀՀ նախարարության և ԵՊՀ ռեկտորատի կողմից ստացված այլ երկրների համալսարանների հետ համագործակցման առաջարկները (Ուրուգվայ, Կազան, Մոսկվա, իսկ վերջերս՝ Արգենտինա), ցավոք, մնացել են անիրագործելի: Թեև ֆակուլտետը մասնակցության իր պատրաստակամությունն է հայտնել, կատարել առաջարկներ, մասնակցել իրագործվելիք ծրագրերի կազմմանը, սակայն մի շարք անհաղթահարելի օբյեկտիվ պատճառներ խանգարել են դրանց կյանքի կոչմանը՝ ֆինանսական խնդիրներ, գործուղումների անհնարինություն, համաճարակի առկայություն, շահագրգիռ խթանիչների բացակայություն և այլն: Հաշվետու տարում ֆակուլտետում (նաև ԲՈԿ-ի մասնակցությամբ) վերանայվել ու լրացվել են ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության հետ կապված մի շարք խնդիրներ՝ հարցաշարեր, կանոնակարգեր, քննատոմսեր, անց են կացվել ասպիրանտների ընդունելության մինիմումների հանձնման, կրեդիտային առարկաների ստուգման, ավարտական մինիմումների հանձնման քննություններ:

Ուզում ենք կանգ առնել դոկտորանտուրայի հետ կապված խնդիրներին: Առկա գործող կարգը ոչ մի հնարավորություն չի տալիս անցնել այդ շրջափուլով՝ աշխատավարձի կոպեկային վճարում, դասաժամերով պարտադիր ծանրաբեռնվածություն, որևէ այլ օժանդակության չգոյություն: Այս ամենը հանգեցրել է նրան, որ վերջին տասնամյակում որևէ թեկնածու չի ցանկացել դոկտորանտուրայով անցնել: Նշենք նաև, որ ֆակուլտետի մասնագիտացումների համար հատկացվող ասպիրանտական անվճար տեղերը ևս խիստ քիչ են, թեև առկա է շատ ավելի վատ մի երևույթ՝ հայտարարված տեղերի համար երբեմն դիմողներ չեն լինում (չէ՞ որ դասախոս դառնալուց հետո՝ ուսուցչից ավելի քիչ են վճարվելու): Ոգևորիչ չէ նաև արտասահմանից ուսանելու դիմողների քանակը: Թեև այս տարի ասպիրանտուրա կամ դասընթացների են եկել Նիդեռնալանդներից, Ռուսաստանից, Լիբանանից, Իրանից, սակայն դրանց թիվը գնալով նվազում է, էլ չենք ասում, որ շուրջ 10-15 տարի է մենք չունենք հայկական գաղութներից սփյուռքահայ ուսանողներ, որը խիստ բացասաբար է ազդում հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման, հայագիտությունը արտասահմանում զարգացնելու կարևոր գործին:

Ըստ ուսումնական պլանների՝ ֆակուլտետում ժամանակին և պատշաճ մակարդակով անց են կացվել պետական ավարտական քննություններ՝ կազմավորվել են պետական քննական հանձնաժողովներ, տեղի են ունեցել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսություններ: Ուսումնական տարվա ընթացքում ուսանողները անց են կացրել մանկավարժական և

մասնագիտական պրակտիկաներ, ինչպես դպրոցում, այնպես էլ գիտական հիմնարկներում, թանգարաններում, Մատենադարանում, ԵՊՀ-ում: Ի դեպ ֆակուլտետը համագործակցում է Խ. Աբովյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի անվան տուն-թանգարանների հետ, մասնակցում գիտական միջոցառումներին, ինչպես առանձին դասախոսներ, այնպես էլ մեր մի քանի ասպիրանտներ այդ հիմնարկներում հանդես են եկել դասախոսություններով, մասնակցել կազմակերպվող միջոցառումներին:

Հաշվետու շրջանում ֆակուլտետը մասնակցել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի քննարկումներին. մի քանի անգամ գրավոր կարծիքներ հայտնել, կատարել առաջարկություններ:

Ֆակուլտետը ակտիվորեն մասնակցել է նաև ԵՊՀ 2021-2025 թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի նախագծի քննարկումներին, «ՀՀ բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի (ասպիրանտուրայի)» բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ տվել իր գրավոր կարծիքը՝ հաստատելով այն միտքը, որ միաստիճան համակարգը չի կարող բարձր որակ ապահովել և իսպառ վերացնում է գիտության մեջ առաջադիմելու և խորանալու խթանիչը:

Մեր մի քանի դասախոսներ համագործակցում են հանրապետության տարբեր հիմնարկների ու կառույցների հետ՝ դառնալով ստեղծվող հանձնախմբերի անդամներ, օրինակ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «100 գաղափար Հայաստանի համար» (Ս. Տեր-Մինասյան), ՀՀ Արդարադատության նախարարության քննչական վարչության կողմից ստեղծված նեղ մասնագիտական հանձնախմբի անդամություն (Ս. Մուրադյան):

Ֆակուլտետի մի շարք դասախոսներ էլ նախագահել կամ անդամակցել են այլ բուհերի պետական քննական հանձնաժողովներում: Ֆակուլտետը տարիներ շարունակ կապեր ունի «Գիտական Արցախ» պարբերականի հետ (հոդվածների տպագրում, գրախոսում, խմբագրական կազմի մասնակցություն), որը շարունակվել է նաև այս տարի: Առիթը բաց չթողնելով արտահայտենք ֆակուլտետի անհանգստությունը կապված ԵՊՀ հանդեսների տպագրումը թղթայինից ցանցայինի փոխադրման ծրագրի վերաբերյալ: Ժամանակին այդպիսի անհանգստություն հայտնեցինք համալսարանի տպարանի փակման առիթով: Բայց փակվեց: Իսկ ո՞վ է հաշվարկել դրա բերած նյութական ու մանավանդ բարոյական վնասը:

Ֆակուլտետի գործունեության մի ոլորտ էլ եղել ու մնում է հանրապետության տարբեր շրջանների և Երևան քաղաքի դպրոցների ու ԵՊՀ-ի միջև համագործակցության ծավալումը: Ընդամենը մի քանի տարի առաջ այդ փոխայցելությունների թիվը հասնում էր մինչև 140-ի: Հիմա շատ է կրճատվել, բայց դեռ չի կասեցվել: Մեր մի շարք առաջատար գիտնականներ այս տարի էլ այցելել են դպրոցներ, կարդացել դասախոսություններ, ապագա դիմորդներին ներկայացրել ԵՊՀ-ի պատմությունը, ուսման հնարավորությունները, պատրաստվող մասնագիտությունները և այլն: Չենք կարող չտալ պրոֆեսորներ Ս. Մուրադյանի, Ա. Աբաջյանի, դոցենտներ Ն. Դիլբարյանի, Ս. Սրապիոնյանի անունները, ովքեր քանիցս մեծ պատրաստակամությամբ եղել են դպրոցներում:

Տարիներ շարունակ ֆակուլտետի դասախոսները հանրապետության շրջաններում և ԵՊՀ-ում անց են կացրել դպրոցականների ամենամյա օլիմպիադաներ: Այս տարի ևս նախաձեռնվեցին, սակայն համաճարակի պատճառով չիրականացվեցին:

Ֆակուլտետում վերջերս կայացավ «Հայ ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի (Գերմանիա) կրթամրցանակի նիստ: Հաղթող ճանաչվեց 4-րդ կուրսի ուսանող Հայկ Սիրունյանը, մնացած մասնակիցները դրամական պարգևներ կստանան «Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից: Հանդիպմանը մասնակցում էին գոհված զինվոր Վարդան Ամալյանի ծնողներն ու հարազատները:

Զոհված զինվոր, մեր ուսանող Արթուր Սուքիասյանին էր նվիրված մեկ այլ միջոցառում, որը կազմակերպել էր ֆակուլտետի ՈւԳԸ-ն և պրոֆ. Ալ. Մակարյանը: Ֆակուլտետում բացվել է Ա. Սուքիասյանի անվան լսարան:

Ֆակուլտետում նշվել է նաև հայոց լեզվի և գրքի նվիրման օրը, մեր մի քանի դասախոսներ եղել են դպրոցներում և կրթական այլ օջախներում՝ լեզվի մասին դասախոսություններ կարդացել: Ինչպես այդ օրը, այնպես էլ մի քանի այլ առիթներով համալրվել է ֆակուլտետի «Վերնատուն» ընթերցասրահը: Մասնավորապես բավական թվով գրքեր են նվիրաբերվել մեր նախկին դասախոս, պրոֆ. Հենրիկ Հարությունյանի անձնական գրադարանից, Համազգային հայ կրթական և մշակութային հիմնադրամից, սփյուռքահայ Սիմոն Սիմոնյանի արխիվից:

Ֆակուլտետը նախատեսել է Վահան Թեքեյանի անվան սփյուռքահայ գրականության ուսումնակրթական և գիտական կաբինետ ստեղծելու գործընթացը, որի վերաբերյալ նախնական համաձայնություն է ձեռք բերվել «Կանադայի և Ամերիկայի՝ Վահան Թեքեյան հիմնադրամի» ղեկավար մարմինների հետ՝ հովանավորչական դեր ստանձնելու համար: Կաբինետի ստեղծումը կնպաստի ինչպես այդ գրականության ուսումնասիրության ու դասավանդման գործընթացին, այնպես էլ օտարերկրացի հայագետների հետ նոր կապերի ստեղծմանը: Առաջիկայում նախատեսվում է մասնաշենքի առաջին հարկում տեղադրել ակադ. Մկրտիչ Մկրյանի կիսանդրին:

Վերջերս ֆակուլտետը Շուշիի շրջանի Եղցահող բանակավայրի դպրոցի աշխատակիցներին հանձնեց 444.000 ՀՀ դրամ, որի վերաբերյալ առկա է ստացական: Ֆակուլտետի ղեկավարությունը հետամուտ է նաև կոլեկտիվի պատվաստման գործընթացին, որը դեռ ցանկալի ընթացք չի ստացել: Ֆակուլտետը ողջունելի գործընթաց է համարում վերջերս կայացած ԵՊՀ ռեկտորի հետ կոլեկտիվի հանդիպումը, որին դասերի պատճառով չկարողացան մասնակցել բոլորը:

Այժմ մի քանի խոսք ֆակուլտետի ամբիոններում տարվող աշխատանքների մասին:

Հայոց լեզվի ամբիոն

Ամբիոնի աշխատակազմը ունի քսանինը անդամ, որոնցից երեքը՝ դոկտոր, առկա ուսուցման չորս, հեռակա ուսուցման մեկ ասպիրանտ:

2020 -2021 թթ. ամբիոնը հրատարակել է՝

• **յոթ մենագրություն**՝ (ընթերցեմ միայն հեղինակների անունները՝ Յու. Ավետիսյան, Լ. Թելյան, Լ. Սարգսյան, Փ. Մեյթիխանյան, Զ. Աղաջանյան, Հ. Չոլաքյան:

• **երկու բառարան**՝ Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան:

• **մեկ դասագիրք**՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (բուհերի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար): **Համահեղինակներ**՝ Յու. Ավետիսյան, Գ. Ներսեսյան, Շ. Գևորգյան, Ս. Գաբրիելյան:

• **ուսումնաստանողակ մեկ ձեռնարկ**՝ «Թարգմանության տեսության հիմունքներ» (Արևիկ Բամայան):

• Տպագրության ընթացքի մեջ է **մեկ մենագրություն**՝ (Լիանա Սարգսյան):

Ամբիոնի դասախոսների տպագրած հոդվածների քանակը անցնում է **երկու տասնյակից**:

Ամբիոնի աշխատակիցները ավարտել են ՀՀ գիտության պետական կոմիտեի թեմատիկ-պայմանագրային աշխատանքը, որի վերաբերյալ հեղինակային խումբը հրատարակել է **գիտաժողովի հոդվածների ժողովածու**, ձեռք են բերվել տեխնիկական միջոցներ:

Ամբիոնի աշխատակիցների ներկայացրած նոր գիտական թեման (**Արդի արևելահայերենի քերականական բառարան**) այս տարի նույնպես արժանացել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման:

Ամբիոնը իրականացնում է մագիստրոսական մեկ ծրագիր՝ «Հայոց լեզու և թարգմանչական գործ»:

Ամբիոնը Եվրոպական լեզուների և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետի հետ միասին նախաձեռնել է համատեղ մագիստրոսական նոր ծրագրի իրականացումը 2022-2023 թթ. ուսումնական տարում: Ծրագիրը կոչվում է **Գրահրատարակչություն և խմբագրական գործ**: Կազմված է ծրագրի մասնագիրը, ճշգրտված են առարկաները, արդեն կազմվում են առարկաների նկարագրիչները:

Այս ուսումնական տարում ամբիոնում առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել մեկ ուսանող:

Մագիստրատուրայում ներառվել են երեք նոր դասընթացներ՝ «Տեքստի խմբագրում և հրատարակչական գործ», «Ոճաչափություն», «Մեդիագրագիտություն»:

Հայոց լեզվի պատմության ամբիոն

Հայոց լեզվի պատմության ամբիոնում իրենց գիտակրթական գործունեությունն են իրականացնում 10 անդամներ՝ 1 պրոֆեսոր, 4 դոցենտ, 5 ասիստենտ: Ամբիոնն ունի 2 առկա ասպիրանտ, որոնցից մեկը՝ օտարերկրյա, 1 հեռակա ասպիրանտ, 3 հայցորդ:

Ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ և այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքով:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել է հայոց լեզվի պատմության ամբիոնի դասընթացների մեծ մասը, թարմացվել են առարկայական քննությունների հարցաշարերը:

Ամբիոնի շատ դասախոսներ մասնակցել են որակավորման բարձրացման տարբեր դասընթացների:

Ուսումնական զործընթացին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակել են գիտական 14 հոդված և 1 աշխատություն՝ /հեղինակներ՝ Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ք. Հարությունյան/:

Հաջողությամբ է ավարտվել գիտության կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման շրջանակներում դրամաշնորհը /Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ս. Կարապետյան/:

Ամբիոնում տիրում է աշխատանքային ստեղծագործական դրական մթնոլորտ:

Ընդհանուր լեզվաբանության ամբիոն

Հաշվետու տարում ամբիոնն ունեցել է ծանր կորուստներ. մահացան ամբիոնի հմուտ և երկարամյա դասախոսական աշխատանքի փորձ ունեցող դոցենտներ Ա. Աբրահամյանը և Ա. Հայրապետյանը, ապա նաև ամբիոնի նախկին վարիչ Լ. Հովսեփյանը: Ուսումնական տարվա կեսը ամբիոնի դասաժամերի ողջ ծանրաբեռնվածությունը հիմնականում ստանձնեցին մյուս երկու դասախոսները՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Վ. Պետրոսյանը և դոցենտ Ս. Ավետյանը, ստեղծված իրավիճակը, բացասաբար անդրադարձավ նաև ընդհանուր գիտական արտադրանքի առումով: Հաշվետու շրջանում նշված 2 դասախոսներն ունեն նաև գիտական հրապարակումներ: Մասնավորապես, Վ. Պետրոսյանը հրապարակել է 6 հոդված, իսկ Ս. Ավետյանը՝ 3 հոդված:

2021-2022 ուստարում ամբիոնը համալրվել է 2 երիտասարդ դասախոսներով, որոնք հաջողությամբ են կատարում իրենց ստանձնած պարտավորությունները:

Այս տարի ամբիոնն ունի 5 մագիստրոս, որը կարևոր ցուցանիշ է վերջին 5-6 տարիների կտրվածքով: Դա պիտի համարել ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների նկատմամբ ուսանողության շրջանում առաջացած հետաքրքրության արդյունք:

Ներկայումս ամբիոնն ունի 5 դասախոս, որոնցից 2-ը համատեղությամբ, մեկը՝ ներքին, մյուսը՝ արտաքին:

Վերջին տարիների ավանդույթի համաձայն, այս ուստարում նույնպես ամբիոնի դասաժամերը կրճատվել են շուրջ 0,25 հաստիքով, որը այս անգամ բացատրվում է հայ բանասիրության ֆակուլտետում ուսանողների՝ նախատեսվածից փոքր թվով ընդունելությամբ:

ԱՎԱԴ. ՀՐ. ԹԱՄԴԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2020-2021 հաշվետու տարում ամբիոնի անդամները գիտական զեկուցումներով մասնակցել են միջազգային, հանրապետական ու համահամալսարանական գիտա-ժողովների, հրատարակել ուսումնասիրությունների ժողովածուներ:

Ամբիոնն օրերս լույս ընծայեց «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հիշողություններում» գիրքը՝ աշխատասիրությամբ պրոֆեսոր Ալ. Շարուրյանի:

Պրոֆ. Ալ. Մակարյանը տպագրել է 10 հոդված, դրանցից մեկը կարդացվել է ԵՊՄՀ-ի կազմակերպած միջազգային գիտաժողովում: Ա. Մակարյանը տպագրել է ժողովածու և «Հակոբ Պարոնյանը մանկագիր» մենագրությունը (համահեղինակ՝ Աստղիկ Սողոյան՝ ասպիրանտ):

Ամբիոնի ձեռքբերումներից է համաբուհական նշանակության ունեցող մի աշխատանք՝ պրոֆ. Ս. Մուրադյանի «Հայ նոր գրականության պատմություն» ձեռնարկի Ա հատորի հրատարակությունը: Նա տպագրել է նաև «Գրական հանգրվաններ» վերնագրով ուսումնասիրությունների Դ գիրքը: Հրատարակել է նաև Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» դատաստանամատյան-պոեմը՝ ընդարձակ առաջաբանով և հավելումներով:

Պրոֆ. Վ. Սաֆարյանը վերահրատարակել է «Գրողի կերպարը և անհատականությունը» մենագրությունը և տպագրել գիտական 2 հոդված:

Ամբիոնի դոցենտ Ն. Վարդանյանը տպագրել է գիտական 8 հոդված, զեկուցումներով հանդես եկել հանրապետական երկու և միջազգային երեք գիտաժողովներում, տպագրել է «Բանահյուսական ժամանակակից գրառումներ Զանգակատուն գյուղից, Վայոց-Ձոր: Պատմամշակութային ժառանգության դրվագներ» հավաքական մենագրությունը: Համահեղինակ է նաև հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «Ռուստամ Զալ. հայ-իրանական դյուցազնավեպ» պատումների ժողովածուի:

Դոցենտ Վ. Ավագյանը տպագրել է գիտական 4 հոդված, մեկական զեկուցմամբ հանդես եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ամբիոնի մյուս անդամների՝ դոց. Ս. Սրապիոնյանի, Ռ. Էլոյանի, Վ. Եղիազարյանի, Ա. Գալստյանի գիտական հոդվածները տպագրական ընթացքի մեջ են:

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Հայ նորագույն գրականության ամբիոնը աշխատանքներ է կատարել ուսումնական գործընթացի զարգացման և արդիականացման ուղղությամբ: Բակլավրիատում բացվել է նոր դասընթաց՝ «Հայ նորագույն գրականությունը և գրական ավանդույթը» (դասախոս՝ դոցենտ Ս. Գրիգորյան):

Ամբիոնի աշխատակիցները ուսումնական գործընթացին զուգահեռ շարունակել են նաև գիտահետազոտական աշխատանքները, հրատարակել գրքեր և հոդվածներ:

Պրոֆեսոր Վ. Գաբրիելյանը հրատարակել է «Հրանտ Մաթևոսյանի «Այս կանաչ կարմիր աշխարհը» հոդվածը:

Պրոֆեսոր Ա. Ավագյանը տպագրել է երեք ծավալուն հոդված (ամեն մեկը ավելի քան 30 էջ):

Ամբիոնի վարիչ, դոցենտ Ս. Գրիգորյանը տպագրել է մեկ մենագրություն՝ «Վահագն Դավթյանի պոեմները» և մեկ հոդված՝ «Եղիշե Չարենցի մոնոստիքոսները»: Տպագրության է հանձնել ևս երեք հոդված:

Լույս են տեսել դոցենտ Ա. Արզումանյանի «ԽԻԿ» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները», «Գեղարվեստական պատկերը՝ որպես գրողների երկխոսության հանգրվան. Ռ. Բըրնս, Վ. Սարոյան», «Սիրապատումի հանգրվաններ. Վ. Շեքսպիր և Հովհ. Թումանյան» և «Ձիապատկերի խորհուրդը Հր. Մաթևոսյանի գեղագիտական համակարգում» հոդվածները:

Դոցենտ Լ. Սեյրանյանը հրատարակել է երկու հոդված: «Հակոբ Կարապենցի «Ադամի գիրքը» վեպի պատկերային համակարգը» թեմայով զեկուցում է կարդացել Կարապենցին նվիրված միջազգային գիտաժողովում: Տպագրության է հանձնել «Հայեցումներ բառերից անդին» վերնագրով հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն:

Հայցորդ Մարինե Ղազարյանը տպագրել է «Հարազատի և օտարի փոխառնչության խնդիրը Սիմոն Սիմոնյանի «Լեռնականներու վերջալոյսը» ժողովածուում» հոդվածը:

Շարունակվել է աշխատանքը գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ: Ամբիոնի առկա ուսուցման մի ասպիրանտ հաջողությամբ հանձնել է մասնագիտական քննությունը և ավարտել ասպիրանտուրան: Ամբիոնն ընդունել է նոր հայցորդ, որի ատենախոսության թեման հաստատվել է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆ

Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնը թեև փոքր է (ընդամենը 5 դասախոս՝ 3 դրույքով), այնուհանդերձ բավական էական դեր է կատարում ֆակուլտետի գիտամանկավարժական կյանքում: Ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում տպագրել են շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածներ, գրքեր, մասնակցել միջազգային և համալսարանական գիտաժողովների: Լույս է տեսել Ժ. Քալանթարյանի «Ժամանակների միջով, ժամանակների հետ» գիրքը: Տպագրվել են Ա. Ջրբաշյանի, Մ. Ջանփոլադյանի և Ժ. Քալանթարյանի հոդվածները Հովհաննես Թումանյանին նվիրված հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածուում:

Երևանի պետական մանկավարժական համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովին մասնակցել են ամբիոնի անդամներ Ժ. Քալանթարյանը և Ա. Ջրբաշյանը. գիտաժողովի նյութերի ժողովածուն տպագրման ընթացքում է:

Ամբիոնում մշտապես արդիականացվում են գրականության տեսությանն ու քննադատությանը վերաբերող մագիստրոսական և բակալավրիատի դասընթացները: Ինչպես մյուս, այնպես էլ այս ամբիոնը վերջին տարիներին ունի մագիստրատուրայի ուսանողների թվաքանակի հետ կապված լուրջ խնդիրներ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Ամբիոնի դասախոսները շարունակաբար ղեկավարում են ասպիրանտների և հայցորդների, մասնակցում գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների

աշխատանքներին: Ամբիոնի աշխատանքը բարձր է գնահատվում ուսանողների կողմից՝ արտացոլվելով սոցիալարցման տարեկան արդյունքներում:

Առաջարկներ և նկատառումներ

Ըստ մեզ՝ համալսարանը քիչ է զբաղվում դիմորդների կողմնորոշման հարցերով, չկան եթերում երևացող քարոզչական ժապավեններ:

Համալսարանը լոկ կրթական և գիտական օջախ չէ: Այն նաև ազգային դիմագծի ձևավորման ու դաստիարակության, երկրին ու ժողովրդին նվիրված քաղաքացիների պատրաստման դարբնոց պետք է լինի: Այստեղ շատ կարևոր են ուսանող-դասախոս փոխհարաբերություններն ու շփումները: Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին համալսարանը քիչ ուշադրություն է դարձնում այդ խնդիրներին, որին չեն նպաստում նաև համալսարանի ունեցած սուղ հնարավորությունները, տեխնիկական հագեցվածությունը, ավտոպարկի չարչրկված մեկ ավտոբուսի գոյությունը և այլն:

Հեռավար ուսուցման կազմակերպման աշխատանքում թերություններ կան՝ տեխնիկայի աշխատանք, ուսանողների մասնակցություն և այլն:

Կարծում ենք, որ մանկավարժի որակավորում տալը չպիտի կապել առանձին լրացուցիչ դասերի և վճարումների հետ, դա հենց այն լուծումներից մեկն է, որ կավելացնի դիմորդների քանակը ֆակուլտետում:

Որոշ դասախոսներ ընթացիկ և ամփոփիչ քննությունների ընթացքում դրսևորում են անհոգություն, նշանակում լիբերալ գնահատականներ:

Սոց. հարցումները չեն արդարացնում: Ծանրաբեռնվածության (դրույքի) իջեցում 700 ժամը արդեն, «յոթ հարյուր տարվա պատմություն ունի»:

Առաջարկում ենք աշխատավարձի բարձրացում:

Որոշ ամբիոններում համակարգիչները հին են:

Օրախնդիր է մասնաշենքի գոնե մասնակի վերանորոգումը:

Առաջարկում ենք կազմել և տպել համալսարանի նոր հեռախոսագիրք:

Դեկանի հաշվետվությունից հետո ելույթ ունեցողները /պրոֆ., պրոֆ. Ալ. Մակարյանը, Ա. Աբաջյանը, Է. Մինասյանը, դոց., դոց. Ն. Դիլբարյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Տեր-Մինասյանը և ուրիշներ/ բարձր գնահատեցին հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարած բեղմնավոր աշխատանքն ու իրենց շնորհակալությունը հայտնեցին ֆակուլտետում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի և ուսումնական գործընթացի կատարելագործման համար: Գիտխորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն դեկանի հաշվետվությունը գնահատեց դրական:

Նիստն ամփոփեց Երևանի պետական համալսարանի ռեկտորի ժ/պ. պարոն Հ. Հովհաննիսյանը:

Նա հիմնականում գոհունակություն հայտնեց հայ բանասիրության ֆակուլտետում ծավալված գիտաուսումնական աշխատանքների և առաջընթացի համար, շնորհակալություն հայտնեց դեկանին՝ պրոֆ. Ա. Ավագյանին: Համալսարանի ռեկտորը, սակայն, ընդգծեց, որ անհրաժեշտ է համառ աշխատասիրությամբ ու ինքնանվիրումով հասնել նոր նվաճումների, վերացնել առկա որոշ թերացումները: Պարոն Հ. Հովհաննիսյանը նաև նշեց, որ ամենայն հավանականությամբ հաջորդ տարվանից դեկանների հաշվետվությունների համար կսահմանվի որոշակի ձևաչափ: Իսկ ինչ վերաբերում է դեկանի ու ելույթ ունեցողների մատնանշած ֆակուլտետում առկա դժվարություններին, ցավոտ խնդիրներին ռեկտորը նախ՝ նկատեց, որ արդեն հաջորդ տարվա համար հատկացվել են լրացուցիչ միջոցներ համակարգչային տեխնիկայի հետ կապված հարցերը լուծելու համար, աշխատանքներ են տարվում դասախոսների լսարանային բեռնվածությունները ինչ – որ եղանակով թեթևացնելու, ԵՊՀ աշխատակիցներին որոշակի տեսակի հատուկ քարտերի միջոցով թանգարաններից և մշակութային այլ օջախներից որոշակի զեղչերով օգտվելու հնարավորություն ստեղծելու համար: Ռեկտորը նաև տեղեկացրեց, որ համալսարանում շարունակվում են վերանորոգման աշխատանքները, հատուկ ուշադրություն է դարձվում նաև տարբեր արտասահմանյան գրադարանների էլեկտրոնային պաշարներին հասանելի դառնալու ուղղությամբ:

Պարոն Հ. Հովհաննիսյանը պատասխանեց նաև գիտխորհրդի անդամներին հուզող այլ հարցերի ևս:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ